

Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՑԱՌԱԿԱՆԱՅ



ԳՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




թիվ 50



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԻՍ ھانراکيداق HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 50 || 13 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1903

ԿԸ ԲՈՂՈՔԵՄ

ԱՌ

ԴԱԻԻԹ ԽԱԶԿՈՆՅ

Խմբագիր Հիւանդանոցի Օրացոյցին

Պարո՛ն ,

« Թուրքոյ Հայ բերքերը » վերնագրով ձեր լրրտաբանած գը-
լուխին մէջ՝ ի՞նչ նպատակով կ'արձանագրէք լոկ « ՀԱՆՐԱԳԻ-
ՏԱԿ, Արսօնաք ԱՐՄԵՆ ԼԻՒՍԻՆԵԱՆ. Սկսած է հրատարակուիլ...
Եւ երկար բարակ կը ծանրանաք « Առաջնորդ Վաճառականաց » ի
մասին, զոր թերթիս մէջ հիւրընկալել բարեհաճած եմ եւ անոր
այլեւայլ պայմաններուն տեխաւր կ'ընէք շողոքորթութէն :

Բողոքական ու կաթողիկ թերթերուն նկատմամբ ալ նոյն շո-
ղոքորթ լեզուանիութիւնն ի գործ կը դնէք, եւ զանց կ'ընէք
Հանրագիտակիս պայմանները զոր ձեր պարտքն էր դնել : Զընելդ
ուզղակի թշնամանք մըն է որուն դէմ կը բողոքեմ եւ բացառ-
ութիւն կը պահանջեմ անմիջական կերպով : Եւ կը բողոքեմ ո՛չ
որպէս Արեւելք եւ Մանգոլմէ բողոքեցին հրապարակաւ ու լոկ խօս-
քով :

Թէեւ, իրենց խօսքի բողոքն ալ ձեր խելօք Դուրիթութեան
պատմական ապտակ մըն էր, ու պիտի մնայ ձեր նենգամտու-
թեան դատապարտութիւնը, Ո՞վ արտօնած է ձեզ Հանրային գոր-
ծի մը մէջ մասնաւոր խորդախութեան դեր կատարել : Երբ այդ-
քան շիւ ու կոյր աչքով կը նայիք Հանրագիտակիս : Ծաղիկին սօր

անկիւնը տեսած էք որ Տնօրէն-Սմբագիր ստորագրած ըլլայ Մի-
քայէլ Ծամտանճեան, ինչպէս Հանրագիտակիս մէջ ո՞ւր կրնայ
խմբագիր ստորագրել Սիմօն Զեօմյեհեան, որմէ կ'երեւի թէ ահ-
նածելու կամ վախճալու մէջէ մէջեան պէտք ունիք:

Թողլով ձեր կարգ մը անհեթեթ, աններելի ու դատապար-
տելի սխալները՝ որոնց տիպիկականները շարոյց պիտի կախեմ և գը-
րական յաւիտենական դատապարտութեանդ խարանն ու վարա-
դադրողմը պիտի կնքեմ՝ ճակատիդ:

Եւ քեզ կը նետեմ գրչի ձեռնոցս:

(Մտնողով)

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տէր եւ խմբագրապետ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

ԶԻ՛ ՎԱՅԼԵՐ

Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութիւնն, օրինակ առնելով
իմ տասը տարիէ ի վեր հրատարակած ժողովրդական Տարեցոյցս,
ինք ալ ձեռնարկեց Ընդարձակ Օրացոյցի մը պատրաստութեան,
որու հասոյթը պիտի ծառայէր աւելցնել այն գումարն որ անհը-
աւելչ տէ՛ է հազարէ աւելի պատասպարեալներ սփոփելու գործին:

Այս մրցակցութենէն ես կորսնցուցի՞, թէ ո՛չ ժողովուրդը
գնահատելով իմ Տարեցոյցիս գերազանցութիւնը, տարուէ տարի
անոր սպառումն աւելցաւ. այս չէ որ պիտի ըսեմ, որովհետեւ երբ
անհատ մը Տարեցոյց կը գնէր մէկ ձեռով, կարդալու համար,
միւսովն ալ Ընդարձակ Օրացոյց մը կ'առնէր աղքատին տան նը-
պաստ մը ըրած ըլլալու համար:

Իմ ընելիքս դիտողութիւն մըն է այն վարմունքին համար զոր
Ընդարձակ Օրացոյցի խմբագրութիւնն ունեցաւ սկիզբէն ի վեր իմ
անձիս հանդէպ: Երբ Հրանտ էֆ. Ասատուր, հեղինակած Օրա-
ցոյցին մէջ ժամանակագրական անցքերը պատրաստեց, անոր մէջ
յիշատակեց բոլոր հայ թերթերը, հանդէսները, նոյն իսկ ա-
ննիք որ ԵՐԵՒԻ կամ ՉՈՐՍ թիւ միայն հրատարակուած էին, նոյն
իսկ անոնք որ իբր ԾՐԱԳԻՐ միայն ֆնացին առանց հրատարակ-
ուելու, բայց մոռցաւ կամ չուզեց յիշել իմ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆ-
ԿԱՆՅՍ, որ Հայոց առաջին պատկերազարդ հանդէսն եղած է և
ԵՕԹԸ ՃԱՐԻ անդադար չարունակուած է: Զ յիշեց իմ ԲՈՒՐԱՍՏԱՆՍ
որու անունն այսօր իսկ ամէնուն բերնին մէջ կայ դեռ: Եւ այս
տարի իսկ նոյն ժամանակագրական ցուցակին մէջ, հակառակ չոր-

ըորդ տպագրութիւնն ըլլալուն՝ նորէն կը մոռցուի Բուրասանը :

Փորագրիչներու կարգին մէջ ինծի համար ՊէրՊէրեԱնն Ն. դրուած է: Օրացոյցին հեղինակը շատ լաւ գիտէ իմ անունս ՆՇԱՆ է եւ իմ ստորագրած բոլոր պատկերներս այդ անունով են. շա՞տ տեսան արդեօք յիշատակել իմ անունս, ես որ մինակս, այդ ցանկին մէջ դրուած բոլոր փորագրիչներուն արտագրած գործին կըրկինը փորագրած եմ:

Եւ իբր վերջին նախատինք մը, այս տարի Հայ քերթերու բաժինին մէջ իմ երկու տարիէ ի վեր հրատարակած Հանրագիտակի յիշատակութեանը համար կը զլանայ երկու բառ իսկ դնել եւ անոր ամբողջ արժանիքը կուտայ անձի մը որ եօթը թիւի տակ միայն ստորագրելու իրաւունքն ունեցած է: Առաջնորդ Վանառականացի բաժինը, զոր բարեհաճեցայ Հանրագիտակի մէջ հիւրընկալել, պարզ յօդուածագրէ մը աւելի իրաւունք չի տար զայն ստորագրողին: Այդ եօթը թիւերը ես տուի իբր բացառիկ թիւ իմ բաժանորդներուն, ինչպէս որ 35րդ թիւն ալ գրական բացառիկ թիւ մը ըլլի, եւ ասանկով եւ ո՛չ մէկուն իրաւունք տուած եղայ տարածայնելու թէ՛ Հանրագիտակի համար տարբեր խմբագրատուն մը դիմելու են եւ ո՛չ իմ տպարանս:

Հիւանդանոցի Օրացոյցի խմբագրութիւնը պարտաւոր էր Հանրագիտակի անունին առջեւ աւելցնել դպրոցական պատանիներու թերթ ըլլալն, ինչպէս կը յիշատակէ ուրիշ թերթի մը գրական, քաղաքական եւայլն ըլլալը: Պարտաւոր էր յիշատակել անոր պատկերազարդ ըլլալն, որովհետեւ մինակ իմ թերթն է որ երկու տարիէ ի վեր 250ի մօտ պատկերներ հրատարակեց: Պարտաւոր էր յիշատակել անոր տարեկան բաժնեգինն ու պայմաններն եւ եւ իմ Տպարանիս հասցէն:

Հիւանդանոցի Օրացոյցի խմբագրութիւնը պարտաւոր էր ընել ասոնք իբր անկողմնակալ, իր արժանապատուութիւնը ճանչցող եւ ուրիշինը յարգող անձ մը, պարտաւոր էր ընել ասոնք գէթ առ ի յարգանս քառասուն եւ հինգ տարիէ ի վեր տպարանային անունը կրող մարդուն, որ այսօր իր ճերմկած մագերովը կանգուն ու վառ կը պահէ իր գրի աշխատանոցը:

Հիւանդանոցի Օրացոյցի խմբագրութիւնը ձրի նախատինք մըն է որ կ'ընէ ինծի, որու դէմ կը բողոքեմ իմ բոլոր իրաւունքովս:

Վիճակագրութիւններու հաւաքածոյ նկատուած գործ մը ազատ ըլլալու է այս օրինակ գծուած կէտերէ: Հիւանդանոցի Օրացոյցն ամէնուս համար պատրաստուած է. եթէ ամէն հայ պարտաւոր է անկէ հատ մը գնել նպատակելու համար Հիւանդանոցին ամէն հայ

ալ իրաւունք ունի նշանակելու անոր մէջ տեսած թերութիւնները որոնք պատուաբեր չեն Օրացոյցի խմբագրութեան :

Եթէ մէկը կ'ելլէ կը քննադատէ Հիւանդանոցի Օրացոյցը, թող չկարծուի թէ անոր հասուցած ֆնասը կը հաւասարի ա'յն բարոյական սնանկութեան՝ զոր կը պատճառեն կարգ մը ինքնակոչ գրիչներ, որոնք շաբաթը յիսուն դրուշի փոխարէն ինքզինքնին կը նուիրեն Օրացոյցին հեղինակութեան :

Տպագրիչ-Փորագրիչ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա Ռ

ՓՈՒՔՐԻԿՆ ՊԱՐՈՅՐ

(Իր լուսանկարին նուէրին առթիւ)

Լիալուսին դեմքդ աղւոր ,
Անբիծ ճակատդ շնորհակաթ ,
Այսերդ կարմուկ , գիրուկ , կըլօր ,
Նոր և կերտեր Արարչին մաս .

Սիրո՛ւն Պարոյր ,

Գե՛ղ անպարոյր :

Աչերդ զոյգ յոյսեր պլպլուն ,
Շրթունքներդ կարմիր կեռաս ,
Աղեղ յօնքերդ քեքեւագոյն
Ո՛հ , ի՞նչ զարմանք կ'ազդեն վրաս ,

Անո՛յ Պարոյր ,

Վա՛րդ սիրաբոյր :

Ասաներդ քննոյ , գեղեցկակերտ ,
Ձեռներդ բացուած վարդի՛ նրման ,
Մարմարեայ են աս կաթ ոսկերդ ,
Հրաւակերտ մըն ես լրման ,

Բընճո՛յ Պարոյր ,

Մօրկանը խոյր :

Ձայնիկդ անուշ , դեմքդ ժպտուն ,
Բե՛կ դիտողին կուտան կասկած :

Թե հարկաւ պէտքես ըլլալ դուն
Անթել հրեշտակ մ'աշխարհի ինկած,
Աղւո՛ր Պարոյր
Հրեշտակաց քոյր:
Բայց պատկերի այս նուերիդ
Պակասն արդեօք գիտե՞ս, Պարո՛յր,
— Վարդ այտերեդ դեռափրօթիք
Ղրկել պէտք էր մի սուրբ համբոյր,
Փափկիկ Պարո՛յր,
Սիրահրապոյր:
Համբո՛յր նակսիդ, շնորհի բոյն,
Համբո՛յր ծաւի աշուկներուդ,
Համբո՛յր քու այդ լոյս այտերուն,
Համբո՛յր լեզուիդ, ցրունցներուդ,
Անմեղ Պարո՛յր
Սիրոյ համբոյր:

Տարսոն Դուլէն

Գ. Հ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ



ՀՕՐԵՆԱԿԱՆ ՏԱՆ ՍԵՐԸ

ՓԻՔ-ՓՕՔ-ՓԻՔ

Ասիկա ճայնն էր ջուրի կաթիլին՝ որ կ'իյնար կանոնաւորապէս պատուհանի մը շուրթին վրայ, ու հիւանդ հոգի մ'էր՝ ոչ նուազ հիւանդ մարմնի մը մէջ, որ գիշերուան բիւրաւոր աղմուկներուն մէջէն կ'ունկնդրէր այդ միօրինակ կրկնումին...

Փիք-Փօք-Փիք:

Նւայն՝ որ շարունակ կը տապալտկէր իր ցաւերու անկողինն մէջ, տեսակ մը սփոփանք կը գտնէր՝ մտիկ ընելով այդ շիթերուն թափթփիլը: Ատով կը խանգարուէր գիշերին մենութիւնը, ու հիւանդը կ'արգիլուէր չափազանց ուշադրութիւն դարձնելէ ժամացոյցի ճօճանակին բարախումներուն, տախտակամածի հեծութիւններուն, վերի անբնակ յարկին մուկերու ընդոստումներուն ու բոլոր այն բաներուն՝ որոնք ահարկու համեմատութիւններ կը ստանան լուութեան ու քնատութենէ խռոված ուղեղի մը մէջ:

Անոր այնպէս կուգար թէ այդպիսի քներգով մը նիրհած էր ժամանակաւ :

Տարտամ ու քաղցր էր այս յիշատակը :

Փի՛ք-փօք-փիք :

Ո՛հ, յանկարծական վերյուշում մ'էր ասի, որ անցեալը իր աչքերուն առջեւ կը պատկերացնէր իբր տողանցում մը : Հօրե-նական տունը տեսաւ ան : Միթէ անցորդներ ու դրացիները տաղաւար չէին անուաներ զայն : Իրաւ է թէ դրամի չգոյութեան պատճառաւ կարելի չէր նորոգութիւններ կատարել հոն : Առ նուազն երեք սրավէրքեր կ'ակօսէին անոր ճակատը եւ սոսկալի մրրիկներ քանդած էին անոր խալխուլ տանիքը :

Հո՛ն, տղոց սենեակին վերեւ, ծակուած ջրորդանէն մէկիկ մէկիկ սիրուն մարգարիտներ խոյս կուտային ու արծաթիկ ձայ-նով կը թափթփէին գինկապատ պատուհանին շուրթին վրայ :

Փիք-փօք-փիք :

Հայրը ստէպ կ'ըսէր. « պէտք է նորոգել այս ջրորդանը : » Բայց ջրորդանը չնորոգուեցաւ բնաւ :

Այն ատեն ա՛յնչափ փոքր էր դեռ, որ անձրեւին տակ կը կենար անոր տեղալը դիտելու համար : Ու սիրագորով մայրիկ մը կը յանդիմանէր խստիւ ու կը փոխէր թրջուած գգեստները :

« Ո՛հ երանի թէ ան հոս ըլլար, մտածեց հիւանդը, զիս անկողնիս մէջը դարձնելու, երանի՛ թէ անոր ձեռքը հրատոշոր ճակտիս վրայ հանգչէ՛ր հիմա... »

Ու բարձր ողողուեցաւ արցունքով :

Երկար ատենէ ի վեր էր որ ան երբեք երազած չէր իր մանկութեան տարիները, հայրենի տունն ու ժայրի՛կը, անուշիկ ու նուիրական երեք բաներ՝ որոնք՝ երբ մէկը նժդեհ է, կեանքի վրայ փրկարար ներգործութիւն մը կը ցանեն. երեք բաներ՝ ուրոնք կը հսկեն վիշտերով պաշարուած մարդուն հոգիին վրայ ինչ-պէս աշալուրջ պահակներ որոնք քաղաքը կը պաշտպանեն ար-տաքին թշնամիներու դէմ :

Իրեն թուեցաւ նախ՝ ինքզինքը վերագտնել մանկիկ մը՝ իր մօրկան ծունգերուն վրայ, երբ գիտէր աղօթել ձեռնամած : Ի-րեն այնպէս կը թուէր նաեւ թէ պիտի վերսկսէր ապրիլ իր ա-ղածրի կեանքը : Ո՛հ, որչա՛փ տարբեր պիտի լինէր այդ կեանքը : Բայց ոչ, ան իր աչքին առջեւ պարզուեցաւ իր իսկութեանը մէջ, անողոք ճշմարտութիւնով մը : Երբեք այնչափ յստակու-թեամբ մը տեսած չէր կամ չէր ուզած տեսնել այդ կեանքը այդպէս :

Շատ կարճատեւ է այն ժամանակամիջոցը՝ ուր մանուկը իր մօր ծունգերուն վրայ կը մնայ։ Եւ ահա կեանքի յորձանքին մէջ կը նետուի դիւրաբեկ կամքով մը զինուած։

Գեղեցիկ յոյսեր կը ներշնչէր ինքր, կ'ուզէին զինքը գիտունի պէս բան մ'ընել, թէպէտ իր հայրը պարզամիտ ու հինաւուրց գրագէտ մըն էր, որ իր կեանքը կ'անցնէր նօտարի մը գրասենեակին խորը, յստակ ոճով մը նշանակելով ու արձանագրելով տիտղոսներն ու անունները, ընդօրինակելով պաշտօնագրեր ու փակցնելով պիտակներ՝ բոլորագիր, խորթագիր ու գոթագիր։ Ան ուրիշ գործ ըրած չունէր, պարզ հոգի մըն էր ուր սակայն կը փայլէր պատույ բուռն զգացում մը։ Ու յաջողած էր, առանց տասը փարա պարտք ընելու ապրեցնել իր ընտանիքը։ Սակայն զաւակ մը չունեցած էր ան, չապլ, գեղիս, որ այնպիսի պարտքեր կ'ընէր որոնց հանդէպ մարդ չկրնար ներողամիտ գրտնուիլ։ Ու պարկեշտ գրագիրը ամօթէն գետնին տակը անցնիլ կ'ուզէր...։ Կը կարծուէր թէ անիկա մեռած էր այս վիշտէն։

Մէկ երկու անգամ մայրը իր զաւակը զգաստութեան բերելու յոյսով, յաջողեցաւ վճարել անոր պարտքերը, խնայողական չեմ գիտեր ինչպիսի հրաշքների գործելով։ Բայց եկաւ օր մը՝ ուր մայրն իսկ անսովոր չորութեամբ մը խօսեցաւ։ Ուրիշ զաւակներ, ուրիշ պարտականութիւններ ալ ունէր ինք կատարելիք։ ալ անկէ ետքը զաւակը՝ ինք պատասխանատու պիտի ըլլար գործած յիմարութիւններուն։ Մայրը բացատրեց անոր իրենց աշխատալից ու խստամբեր կեանքը, ու գծեց անոր ալ պարտքը։

— Այս է կեանքը, գոչեց զաւակը, ապրիլ խրճիթի մը մէջ ուր կարելի չըլլայ տասը փարա աւելի ծախսել։ Այլ եւս լուր չպիտի առնէք վրայովս, նոյն իսկ եթէ մարդերու ամէնէն թըշուառն ըլլամ։

— Ո՛հ, զաւակս աղերսեց մայրը, միշտ գրկաբաց պիտի սպասեմ քեզ։ Ապահով եմ թէ օր մը յափրացած անբնական կեանքէդ՝ սիրտդ պիտի սրանայ դէպի հայրենի խաղաղ հիւզը, որ երանի թէ ամայի չըլլար այն ատեն։

Մեկնեցաւ տղան, ու ալ չվերադարձաւ։

Անկէ ետքը յիմարութիւններ յիմարութիւններու վրայ կուտակեց, առանց ժամ մը հանգստութիւն, ճամարիտ երջանկութիւն գտնելու։ Երբեք չէր կրնար գտնել զայն, ա՛յնչափ յոռի էր ապրած միջավայրը։ Միւս կողմէ հիւանդութիւնը, միմիակութիւնը ու ակամայ անգործութիւնը կը հարկադրէին յաճախելու վատշուէր մարդերու քով։

Բայց ահա հասաւ նախատեսուած ժամը, ուր սիրտը կը խո-
յանար դէպի հինաւուրց խարխուլ խրճիթը:

Փիք—փօք—փիք:

×

Կէս օր կը հնչէր հիւանդի սենեակին ճօճանակաւոր ժամա-
ցոյցը երբ հիւանդը արթնցաւ բացուող դրան ճռնչիւնէն:

Բժիշկն էր ներս մտնողը: Յառաջացաւ դէպի անկողինը,
իր սովորական ցրտութիւնովն ու հանդարտութեամբը քննեց
հիւանդը: Բժիշկին դէմքը լուսասրուեցաւ:

— Ամէն բան լաւ կ'երթայ, ըսաւ հիւանդին: Կը թողատրեմ
որ մէկ ժամ՝ ելնէք անկողինէն այսօր: Եթէ անխոհեմութիւն
մը չընէք, ապա քինումը արագ պիտի լինի:

— Տասը ժամ քնացած եմ, ըսաւ հիւանդը, սիրտս թեթե-
ցած կ'զգամ, աւելցուց:

Ու քիչ մնաց որ իր պատմութիւնը պիտի պատմէր բժիշկին,
բայց սա արտօրանքի մէջ էր, այլուստ՝ ամօթը արգիլեց հի-
ւանդը խօսելէ: Հազուեցաւ ու դէպի պատուհանն յառաջացաւ:
Հիւանդութիւնը կբաժ էր անոր բարձր ու վայելուչ հասակը, ու
անյարդար մօրուքը ծերուկի մը երեւոյթը կուտար անոր. դե-
ղեւելով կը քալէր:

— Պէտք է որ քալելու վարժուիմ՝ փոքրիկ տղու մը պէս,
ըսաւ ժպտելով տխրօրէն:

Գարուն էր, պատուհանին կրթնած՝ դիտեց բակը: Արեւը կը
փայփայէր էտանիքը բայց բակը չէր մտներ: Փանի մը
ծաղիկներ աճեր էին դրացի պատուհանին վրայի կոտրած թա-
ղարներուն մէջ: Գարնան առատ պարգեւներէն ոչինչ աւելի ին-
կած էր այս ամէնատխուր բակին մէջ: Երկինքի, ամէնափոքր
խորշը զոր կարելի էր նշմարել՝ կապոյտ էր: Ո՛րչափ սխալի
թուեցաւ անոր ամէն բան: Գաղջ օդ մը կ'ուռեցնէր պատուհա-
նին վարագոյրները: Մէկ մտածում միայն ունէր ան հիմա. « Ես
պիտի երթամ տեսնեմ մայրիկս »:

Չեմ գիտեր թէ քանի՜ անգամներ ան այս « Մայր » բառը
արտասանեց իւրովի, քաղցրութեամբ, գորովանօք:

Ջուրի կաթիլներ գիշերն ի բուն անընդհատ թափիլով
փոքրիկ լճակ մը կազմեր էին սրտուհանի շուրթին վրայ: Ծնճ-
ղուկ մը եկաւ ջուր խմելու իր աչքերուն առջեւ վստահօրէն:

Երիտասարդը միացուց ձեռուրները ու դէպի երկնակապոյտը
կարկառեց զանոնք:

— Ո՛հ, Աստուած իմ, գոչեց, որքա՛ն գեղածիծաղ է այս

նորահաս գարունը: Ու ես ինքս նոր մարդ մըն եմ: Ընդհուպ այո՛, ընդհուպ պիտի երթամ տեսնեմ անուշիկ մայրիկս...:

Ջուրի վերջին չիթ՝ մըն ալ ինկաւ պանիքն ի վար ու երգեց պատուհանին վրայ « Փիք—փօք—փիք »:

Բպգէշ

Թրգմ. Գ. Խ. ՊԱՍՏԱՃԵԱՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԹԵՐԹԻԿԸ

(ՕՐԱԹԵՐԹ ՇԱՐԱԹՅՐԵԱՆ)

Կը գտնուի Մայրաքաղաքի բոլոր նպարավաճառներուն
Մասնավաճառներուն եւ ... Սափրիչներուն հոյ

Պոլսոյ համար տարեկանն է	899 ոսկի
Գաւառներու համար » »	900 »

Հասցէ՝ ԼՈՌԹԻՒՆԵԱՆ ՈՒՐ ՈՐ ԵՄ

ԾԱՆՈԹ. — Օրաքերք Հանրագիտակ կը հրատարակուի ամեն շաբաթ, քախտապիթներէ եւ փիրեներէ բուժներնին փախողներուն ի մխիթարութիւն եւ ի սիրտիս:

ՄԻՇՏ ԵՒ ՅԱՐԻՏԵԱՆ

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ « ԵՐԿՈՒ ԽՕՍԻ » ԵՐ

ԵՕԹՆՈՐԵԱՆ ԱՐ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Երբ մեք կօշիկնիս հագած, բալթօնու օձիքը վեր դարձուցած, ապուխտի կտոր մը կրծելով եւ զրպաննիս տասը փարա ունենալով կ'սկսէինք այս բազմօգուտ թերթիկին հրատարակութեան ... անդին Սիւքի մէջ Մ. Լէօնիտաոն էր որ կ'սկսէր իր շուններու եւ կատուներու ներկայացումին: Ասով, մեք երկուքս ալ օգուտը կը մտածենք հասարակութեան եւ ասիկա անուրանալի իրողութիւն մըն է եւ երբեք ջուր չվերցնել... Սաքըղի տիւղին պէս:

Ես մեծ մարդ եմ եւ ասոր համոզուելու համար պէտք չկայ հեռունները երթալ, չափեցէք հասակս եւ տեսէք:

Ուրիշ թերթ երբեք մի՛ կարդաք, կարդացէք միայն իմ թերթիկս, եւ եթէ չկարդաք, չեմ խառնուիր, շատ մը օգուտներէ պիտի զրկուիք, մանաւանդ այն վաճառականներու յատուկ նիւթերէն զոր խմբագիրս կը թարգմանէ Հօթենթերէն լրագրերէ:

ԽՄԻԱԳՐԱԿԱՆ

ՀԱՄԱՐԱՏՈՒ ԵՒ ՀԱՄԱՐԱՌՈՒ

Խօսք չեմ ուզե՛ր : Մարդ չպի՛տի ըլլանք մենք ընդհանրապէս, և Թաղ . Խորհուրդներէն մէկ քանին՝ մասնաւորապէս, որոնք Աստուծոյ տուածէն այնչափ շատ են ու բազմաթիւ մեր մէջ :

Թաղ . Խորհուրդ ըլլալ , ի՛նչ մեծ բան , Աստուած իմ . Ռոչիտին հօրեղբօրորդին և Մօրկանի փեսան ըլլալը այսչափ մեծ բան մը չէ որչափ Թաղ . Խորհրդոյ անդամ ըլլալը :

Բայց եթէ կայ բան մը որ երբեք չեմ կրցած սեղմեցնել սա միջնադարեան դանկիս մէջ , սա է Թէ , ի՛նչպէս կ'ըլլայ որ ո եւ է մարդ մը Թէ՛ Թաղական , Թէ՛ քարտուղար և Թէ՛ Պատրիարքարանի պաշտօնեայ կ'ըլլայ միեւնոյն ատեն . իմ խելքիս բանը չէ , քանի որ , ըստ Աւետարանական պատուէրի . « Ոչ կարէ ոք երկուց տէրանց ծառայել » :

Համարատու և համարառու , ահա՛ կնճռոտ հանգոյց մը :

ՄԻԱՆՃԻ ՍԵՓՈՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԽՆԱՅՈՂՈՒԹԻԻՆԸ... ՄԵՐ ՏՈՒՆԵՐՈՒ ՄԷՁ

Ամէն մարդ , սկսեալ Երանոս աղբօրմէն , 'սա՛ լաւ գիտէ Թէ՛ խնայողութիւնը միակ դրամով չըլլար , նոյն իսկ օրացոյցներու մէջ բառեր ալ կրնան խնայողութիւնով գրուիլ : Օրինակի համար , երբ երեսդ ի վեր «Չար» կը պօռամ , դուն երբեք բարկանալու չես , քանի որ , ըստ Դ . Խաչկոնցի , Չար կը նշանակէ Չնքուչցի Արմենակ : Աստուած խելք տայ չունեցողներուն :

Հիմակ անցնինք բուն խնդրին՝ խնայողութիւն ընելու համար շատ մը միջոցներ կան , ես մինակ մէկ քանի հատը պիտի ցուցնեմ : — 1. Հագուստ երբեք մի՛ հագնիք , Կիւսթավ Նակէլ անգամ . . . մերկ կը ստըտէր : Աւելին կայ , մեր դրացի Կիրակոս աղան ալ մերկ կը պտըտի կ'ըսեն . . . բաղնիքին մէջ : 2. Միս , պտուղ . անուշեղէն մի՛ ուտէք , այլ սոխ հաց և հաց ու սոխ կերէք : 3. Երբ ձեր տանտիրոջ կամ Թերթի մը խմբագրութեան պարտք ունենաք , կամ կէսը և կամ երբեք մի՛ վճարէք : 4. Երբ ցորեն ունիք ծախելիք , կէսէն աւելի քար , հող և ուրիշ բաներ

խառնեցէք: 5. Կաթը առանց ջուրի մի ծախէք, եթէ ձեռքեր-
նուդ գայ, ջուրին մէջը կաթ ալ մի խառնեք: 6. Հաց մի ու-
տէք, որովհետեւ ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ եւ... բա-
նիւ և օդով: 7. Մեռած ատեննիդ լեռը կամ սանկ ամայի տեղ
մը գացէք և հոն մեռէք:

Սպասելով որ ամէն մարդ հաւնի հիանայ իմ այս տնտեսա-
գիտական խիստ հմտալից յօդուածիս և հաճի գոնէ սանկ քսան
փարանոց փունջ մը զրկել ծաղիկի: Եմ և մնամ

Ս. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ օր Տիկին Թէրէզ Իւմպէր, խօսքը իր դատաւորնե-
րուն ուղղելով, մեծ յայտնութիւն մը ըրաւ որ լոյս սփռեց մինչև
հիմայ եղած բոլոր Իւմպէրեան խնդիրին վրայ. « Ես անմեղ եմ »,
ըսաւ:

— Քօքլէն Երէց, որ այսօր հոս ներկայացումներու սկսաւ,
չատ մեծ տաղանդ ունի եղեր, բայց մէկ առաւելութիւն մը կը
պակսի իրեն, եթէ ոչ զինքը կատարեալ մարդ պիտի հռչակէինք
... Խեղճը բանագոյութենէ երբեք չհասկնար եղեր:

— Կ'ըսեն թէ Մաթէն առաւօտեան թերթին խմբագիրներէն
Մ. Զ. որ 35 տարեկան տղայ մըն է, անցեալ օր կատուն կոր-
սնցնելու դժբաղդութիւնն ունեցած է: Խմբագրութիւնս իր ցա-
ւակցութիւնը կը յայտնէ:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Բարիդ, Դեկտմ. 240. — Թօքիոյէն կը հեռագրեն թէ Ճա-
բոնցիները դեղին են, Զինացիներն ալ դեղին են:

Սահարա. — Այստեղի մարդիկն ալ սեւ են:

ԹԵՐԹՈՆ (1)	կը քնանայի, բայց հակա-	աղային տղան, հակառակ
ՄԱՐԴ. ԶԻՏԻՐ ԸԼԼԱՍ	ռակ այս ամէնուն երանոս	անունին Բահադ ըլլալուն,
(Բանագողական կեանքէ)	աղան իր երանելի, երիցս	էր ու կը մնար կատար-
—	երանելի տղուն կը կրկնէր	եալ եզեռքս մը:
ԳԼՈՒԽ Ա.	Թէ «դուն մարդ չպիտի ըլ-	ԳԼՈՒԽ Բ.
—	լաս: »	Եւ պարոն Բահադ մարդ
Եւ կառքը կը սուրար,	Բահադ աղբար, որ	ըլլալու միջոցը փնտռեց,
ամպերը կը հրդեհուէին,	ասկէջ չեմ գիտեր քանի	երկար բարակ փնտռեց եւ
փողոցները բազմութեամբ	հազար տարիներ առաջ	վերջապէս օր մը հվրէքա
կը լեցուէին, նարեկը Գա-	գոյութիւն ունէր, կ'ըսէր	պօռաց:
սիմ կը թարգմանէր, աշ-	Թէ ամէն անոնք որոնք իմ	Գտած էր փիլիսոփայա-
խարհս կը դառնար, Ման-	անունս պիտի կրեն՝ մարդ	կան քարը եւ կամ մարդ
զուժէ կը յառաջդիմէր, ես	պիտի ըլլան, եւ խոշոր	ըլլալու միջոցը:

(Շար.)

Լոնտոն. — Երէկ առտուան կողմ հոս հասաւ կառք մը որու մէջ կառապանէն զատ մարդ չկար :

Մատրիտ. — Տօն Թատէո անուն մարդ մը ամուսնացաւ : Չենք գիտեր թէ ինչո՞ւ :

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՕՆԻԿ

Տ. Կ. Վ. վաղը պիտի պատարագէ :

Տ. Տ. Վ. պիտի քարոզէ :

Տ. Հ. քհն. մարդ մը պիտի պատկէ :

Տ. Ղ. քհն. գործի վրայ է, և լուս քերելու ժամանակ չունի :

Ս. ՓՐԿՉԵԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Փոխան մէկ կալոն գինիի, չիլ մը Օմուրճայի տիւզ նուիրեց. Բ...եան :

— Տիկին Ս. Կ...եան երկու կէս օրս հաց և քսան փարպի պանիր նուիրեց, իր ողբացեալ ամուսինին քառասունքին առթիւ :

— Բարեսէր ոմն ճրիաբար պիտի հայթայթէ ապուշներու կօշիկները :

— Ուրիշ մի ոմն բարեսիրագոյն, մարդատիրաբար յանձն առած է հայթայթել Ս. Յակոբի Որբանոցին գլխու սանտրերը, որոնք այնչափ հինցած և ազտոտաճ են :

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Իզմիրի մէջ հրեայ կին մը երեք զաւակ ծներ է, երկուքը աղջիկ, մէկը տղայ, և եթէ ժամանակ ունենար տուղինան պիտի ամբողջացնէ եղեր, կ'ըսէ Մանգուլէ :

— Սելանիկի մէջ քանի մը հրեայ քսակահատներ նոր միջոց մը հնարած են ոսկին անյայտացնելու համար... կլլելու դրութիւնը, Հիմա քննութիւն կը կատարուի անոնց փորերուն մէջ, ոսկիի երակներ գտնելու համար :

— Մարդ մը, անցեալ օր ինքզինքը ծովը նետեց, անունը լրագիրներու մէջ գրել տալու համար :

ԱՐՑԱՍՈՎՈՐ ՄՐՅՈՒՄ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԹԵՐԹԻԿՈՆ

Բացառիկ նուէր՝ ՄԱՍՆԱԳԷՏԻ ՁՐԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՄԸ

ԼճՈՒԹԻՆԵԱՆՆԵՐ ԲԱՆԱԳՈՂԷՆ ԵՂԱԸ ԹԷ ԲԱՆԱԳՈՂԵՐ ԼճՈՒԹԻՆԵԱՆԷՆ

ԺԻՆԻՐԻՆ ԱՆՂԱՄՆԵՐՆ ԵՆ,

Ե Ս

Բ. ԼՈՒԹԻԹԻՆԵԱՆ և

ՍՏՈՒԵՐՍ

Խմբագիր Տնօրէն


ԲԱՆԱԳՈՂ ԼՈՒԹԻՆԵԱՆ

ՄՕՐ ՄԸ ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Ո՛հ, որդեակ իմ, ըսաւ նէ,
 Պիտի ապրիմ՝ Թէ ապրիս. իսկ Թէ մեռնիս պիտի մեռնիմ,
 Հայրդ ու քոյրերդ արդէն ծածկէ տխուր սեւ շիրիմ:
 Մենք մինակուկ պիտի մընանք, դո՛ւն բնտանիքս ես համակ,
 Ու կը Թողուս դո՛ւն մայրիկդ, ո՛վ իմ արիւնս, իմ որդեակ:
 Ո՛հ, պիտի ապրիս ինձ համար, Աստուած պիտի բուժէ քեզ,
 Ո՛հ, մի՛ մեռնիր, մայրդ քեզ շատ կը սիրէ՝ վշտակէզ.
 Ջգիտեմ ի՞նչ ծայն ինձ կ'ըսէ տակաւին « ո՛վ կին յուսա՛ »,
 Կընամ յուսալ արդեօք ես, Թէ այլ եւրս ուշ է, ա՛հ.
 Մատղաշ հոգին աղջիկիս կ'արգիլէ երթող քուկին
 Այն աշխարհը Թողելու, սպասէ՛ զէթ մայրիկին:

Թարգմ. ՄԱՆՆԻՍԵ

ՔԱՄՓԼԵՏՆ



ՉԻՆԱԿԱՆ ԱՌԱՄԱՆԵՐ

Քու հեծածդ էշ մ'է. կ'տեսնես որ դիմացէդ մարդ մը կ'եր-
 թայ աղէկ ձիու մը վրայ հեծած, կ'տրամիս ու կ'գանգատիս այդ
 մարդուն քեզմէ ունեցած առաւելութեան վրայ: Դարձուր գլուխդ
 տես սա բաղմունքինը որ հետիտուն ետեւէդ կուգայ բեռներու
 տակ կ'քելով, եւ միտիթարէ ինքզինքդ:

— Երկարատեւ յաջողութիւն մը կ'ծնանի անհոգութիւն ու
 գողըզութիւն:




ՀԻՒՅՆԴ ՔԱՆՈՂՆԵՐ

ԵՒ

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅԻՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Քանի մը տարի առաջ Պարոն Հանրի Մէյթ հատոր մը հրատարակած է ուր մանրամասնօրէն կը քննէ ջլախսային քաղղներու հիւանդութիւնը :

Բոլոր ժողովրդական աւանդութիւններու մէջ թափառական



Բոլոնիացի Մոզէր մականուանեալն Մովսէս՝

Հրեայինը ամէնէն համաշխարհային երեւոյթն առած է : Մօսնջե-

նաև որ քաղաքի խորհրդարանը դեմքը չահագրգռած է չէ թէ միևնաչափ պարզ ժողովուրդին, հապանկարիչներ, վիպագիրներ, բանաստեղծներ ու հռետորներ զբաղած են անով եւ բոլոր երեւակայելի ձեւերը տուած են այդ մօրուսաւոր հրեային, որու հիւանդութեան բժիշկները խելք չէին կրնար հասցնել:

Պարոն Մէյժ կը թուէ մէկէ աւելի քաղաքներ, ամէնքն ալ հրեայ, որոնք Բարիզէ անցած եւ Սալբէթրիէի հիւանդանոցը կայ առած են: Ի մէջ ուրիշ օրինակներու կը յիշատակէ Մօզէր անուն Բոլոնիացի հրեան, Մովսէս մականունեալ, որ 38 տարեկան է եւ Եւրոպայի գրեթէ բոլոր երկիրներն այցելած է: Դեռ տղայ հասակին մէջ ուսական կառավարութիւնը իր պաշտպանութեան տակ առնելով զայն, մասնաւոր վարժարաններու մէջ բաւականաչափ ուսում եւ դաստիարակութիւն տալ տուաւ անոր: Տասնըվեց տարեկանին, ստիպուելով դաւանափոխ ըլլալու՝ փախաւ Ռուսիայէն:

Ա՛լ անկէ վերջը սկսաւ իր թափառական կեանքը, երկրէ երկիր առանց որոշ նպատակի մը: Պուտա-Բեյթի մէջ բաւականատեւն մնաց ուր ամուսնացաւ: Սակայն քաղելու, համբողջելու ախտէն կրճուած, իր ընտանիքը տարաւ Երուսաղէմ ձգեց ու ինք վերսկսաւ թափառիկ կեանքին՝ ամէն տեղ մուրալով, քիչով գոհ մընալով եւ բան մըն ալ չունեցած ատենը գուցէ ա՛լ աւելի երջանիկ զգալով ինքզինքը:


1892ին ներկայացաւ Բարիզի Սալբէթրիէի հիւանդանոցն, իր ախտին դարման մը խնդրելով. նոյն իսկ Պարոն Ռօշիլտի դիմեց ելեքտրական բուժիչ գործիք մը գնել տալու համար, եւ սակայն օրին մէկն անհետացաւ դէպի ո՞վ գիտէ որ քաղաքն:

Բաւական յաճախ կը տեսնուին այս մարդիկը, Բոլոնիա կամ Գերմանիոյ խորերը աշխարհ տեսած, որոնք թշուառ կեանք մը կ'անցնեն քաղաքէ քաղաք, երկրէ երկիր թափառելով եւ ամէն տեղ իրենց ախտի դարման մը խնդրելով: Գրեթէ բոլորն ալ միեւնոյն խեղճ վիճակն ունին: Իրենց հիւանդութեան բոլոր նշանները կրնան մանրամասնօրէն պատմել՝ ո՛րքէնք մը լաւատեղեակ մէկու մը խրախուսքով, եւ յանկարծ կ'սկսին լալ քաջած թշուառութիւննին ու տառապանքնին յիշելով: Բոլոր խրատուած դարմանները կը գործադրեն առաջին անգամ եւ վիւթով մէկգի կը զնեն զայն իբր անօգուտ:

Զմոռնանք ըսել թէ բոլոր ասոնք Հրեայ են: Հրեաները տեղ մը հաստատուած չեն եւ ամէն տեղ կը հաստատուին, բնաւ չեն վարանիր գործի կամ հիւանդութեան մը պատճառով իրենց տունն ու տեղը թողուլ եւ ամենահեռաւոր տեղեր երթալ:

* * *

Երբ Յիսուս խաչափայտի ծանրութեան տակ կը կքէր Գող-
գոթայի ստորորը, Հրեայ մը ծաղրածու շեշտով մը ըսաւ,
« Այդչափ ծափեր կուգայ կոր խաչը քեզի, քալէ՛, քալէ՛, նա-



Թափառական Հրեայ

յինք :— Այո՛, ըսաւ Յիսուս, պիտի քալեմ ես, բայց դուն ալ պի-
տի քալես մինչեւ որ ես վերստին գամ : »

Եւ այն օրէն ի վեր հայնոյիչը կը քալէ բեւեռային սառուցեալ
անապատներէն անցնելով դէպի հասարակածային կիզիչ անապատ-
ները, պահելով միշտ միեւնոյն տարիքը և բնաւ ժպիտ մը չունե-
նալով երեսին վրայ : Սպասելով այն օրը որ Յիսուս վերստին
գալով պիտի ազատէր զինքը այդ ապաշխարանքէն :

Ահա՛ այս է Թափառական Հրեային աւանդութիւնը : Կրնանք
դիտել տալ իբր հիւանդ նկատուած մահկանացու Թափառական-
ներն եւ որ կը կազմեն աւանդութեան Թափառական Հրեան :

Թարգմ. Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

1904 Յունուարի առաջին թիւով պիտի սկսինք հրատարակել

Գրական, գիտական, արուեստական

Բառերու բացատրութիւններ

որու համար կանոնաւորապէս մասնաւոր տեղ մը պիտի յատկանայ ամէն շաբթու :

Հետեւելով Nouveau Larousse Illustré հոյակապ համայնագիտակ բառարանին, պիտի ջանանք կազմել հայ համայնագիտարանի մը տարերքը, որու առաջնորդող բառը Ֆրանսերէն պիտի ըլլայ : Գուցէ ապագային կարողանանք հրատարակել հայերէն լիակատար բառարան մը՝ որու ծրագիրը կազմած է արդէն Մեծ Ռիմէն էֆ : Լուսինեան և որու համար կ'աշխատի բաւական ժամանակէ ի վեր :

Ինչպէս ըսինք Հանրագիտակի մէջ անշատ տեղ մը պիտի գրաւէ այս աշխատութիւնը, որու համար ամէն շաբթու չորսական էջ յատկացուած է, և եթէ գտնէ այն յաջողութիւնը, որու վրայ չենք կասկածիր, մինչեւ ութի պիտի բարձրացնենք էջերուն թիւը :

Նման գործերու մէջ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ պէտքը անհրաժեշտ է : Բնաւ չպիտի խնայենք աշխատութիւնը զարգարելու համար պատկերներով բոլոր այն նիւթերը որոնց բացատրութիւնը պէտք ունենայ անոնց :

Մեր ծրագիրը պիտի ըլլայ .

ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ. — ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

Բոլոր լեզուներու ծագումը եւ պատմութիւնը :

Հին ու նոր ազգերու գրագիտութեան պատմութիւնը :

Սկիզբէն ի վեր երեւցած դասական եւ ոչ-դասական նշանաւոր հեղինակութիւններու վերլուծումը, ինչպէս նաեւ այդ գործերու հետոսներն ու դասական անձնաւորութիւնները :

Հին ու նոր նշանաւոր զանազան շէնքերու նկարագրութիւնը, հռչակաւոր արձաններու, նկարներու, լիւրի սեպեկութիւններ :

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ .

Աշխարհիս բոլոր մասերուն նկարագրութիւնը եւ բոլոր երկիրներու բնական , քաղաքական , կրօնական , ճարտարաւոյսական ու առեւտրական աշխարհագրութիւնները :

Ճամբորդութիւններ , խուզարկութիւններ , արեւախումբեր :

Աշխարհագրական նշանաւոր գործերու վերլուծումը :

Բոլոր նշանաւոր մարդոց կենսագրութիւնը :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

Կրօնները , դիցաբանութիւն , փիլիսոփայութիւն , քաղաքական ճնշեսագիտութիւն , մանկավարժութիւն :

Ընթանիք , ամուսնութիւնը եւ սովորոյթները նախնական ու արդի ազգերու մէջ :

Տնտեսագիտական , քաղաքական ու կրօնական հարցեր :

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

Բնագիտութիւն , բնաւրժութիւն , բնապատմութիւն , առողջապահութիւն , բժշկութիւն ,

Երկրագործութիւն , անասնաբուծութիւն :

Ալքիմի , մոգութիւն :

Լուսանկար , հեռագիր , սինեմաթոգրաֆ , Ք . ճառագայթներ :


ԶԱՆԱԶԱՆՔ

Առօրին ճնշեսութիւն , ձեռքի աշխատութիւն , հագուստ , սնունդ , երկաթուղի , դարոցներ , խաղեր , եւայլն , եւայլն :

Կարող չենք հոս կատարեալ ցանկ մը տալ բոլոր նիւթերուն որոնք պիտի երեւին Հանրագիտակի այս մասին մէջ , միայն կըրնանք վստահեցնել մեր ընթերցողները թէ հոն պիտի կարենան գտնել լիուրի տեղեկութիւններ բոլոր բառերուն վրայ զորս իրենք կը կարդան գրական գործերու կամ գիտական գրքերու մէջ : Նման աշխատութիւն մը առաջին անգամը ըլլալով երեւի , չենք կարող ամբողջովին կատարելագործուած ծրագիր մը ի յայտ բերել , գործին շարունակութեան մէջ է որ պիտի կարողանանք հասնիլ կատարելութեան աստիճանին :

ԱՐԱՄԱԶԴԻ ԾԱՌԸ

Իրէք ապակեայ կլոր կամ երկայն շիշի մը մէջ թորեալ ջրով խառն նիքուաթ *s'arժանի* բաղադրութիւն մը, եւ մէջը կախեցէք արոյրի (բիրինճ) թէլի մը կապուած զինկէ թէլ մը զանազան ձե-



ւերով եւ կամ թերթի մը՝ զանազան պատկերներու ձեւով կտրը-
ուած. բերանը խիցով մը գոցեցէք եւ անօթը սեղանի մը վրայ
դրէք:

Արծաթը փայլուն բիւրեղներու ձեւին տակ պիտի գայ կաշիլ
զինկի թերթին վրայ եւ քիչ ժամանակէն պիտի կազմէ հրաշալի
բուսականութիւն մը աննման տեսքով եւ փայլով:

Կարելի է նմանօրինակ արդիւնքներ յառաջ բերել ուրիշ մե-
տաղական աղեր գործածելով:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏՆԵՐԱԶԱՐԴ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 18-20 էջէ բաղկացեալ:

Վերցմանեայ ու նուաճեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պօղոսեան
Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլկերեան
Եւթոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա'ա, Կարապետ էֆ. Գօճաեան
Թեֆիքսալ, Ասատուր էֆ. Արաքեան
Խաբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիւրին, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Նիքսար, Յովհաննէս Էֆ. Բեյքեֆեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Արթ. Տ. Գրիգոր Կ. Է. Թաշճեան
Մարաշ, Արթ. Տ. Նէրսէս ԲՃ. Շահինեան
Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Քարակալուրեան և Ընկ.
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Մանուկ էֆ. Պէյլերեան
Տիւրքիա, Լեւոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՍԱՆ

ALCOHOLIC BEVERAGES

ALCOHOLIC BEVERAGES

ALCOHOLIC BEVERAGES

ALCOHOLIC BEVERAGES

ALCOHOLIC BEVERAGES

ALCOHOLIC BEVERAGES

ALCOHOLIC BEVERAGES

ALCOHOLIC BEVERAGES

ALCOHOLIC BEVERAGES

ALCOHOLIC BEVERAGES

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՅՍԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՅՈՅՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամէնէն ժողովրդական, Ամէնէն Զուարճալի

Ն Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑԸ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Ի՞նչ է Քօնէրը. — Ագահութիւն. — Պարահանդէտը ինք աւարի առաջ (Բանագող Լուսինեան). — Հագարումէկ կերպեր ժամը գիտնալու. — Պատմութիւն մը. — Աշխարհիս վախճանը. — Թէ ինչ՞ա ես չեմ յաջողիր (Քասիմ). — Հարց-Պատասխան (Յ. Հանեան). — Անխօսեմ հարցումներ, Կնոջ հարցումներ (Ա. Փանոսեան). — Տիկին Մաք Աւիլեմս եւ կայծակը. — Քաւն եւ ... դարու ճաշ մը. — Կրօններու պատմութիւնը. — Այծեամի սրբը. — Հարսի մը պատրասէր (Քասիմ). — Աշխարհիս վրայ միայն կենալու տեղ. — Նշանաւոր միականիներ. — Մխիթարական բուրբ յոռեան բարեկամիս (Քասիմ). — Նրկրագործական Պատառիկներ. — Օգոսկար գիտելիքներ. — Յուին դարձանը. — Աշխարհիս նախնական վիճակները. — Աչկերու առողջութիւնը. — Ակամայ գիւղացի (Յ. Պարոնեան). — Ժամացոյց մը գոնոց պարունջ. — Տումակնիդ, պարօն-ոյ՛ք. — Հինգ տա հարիւր տուտ. — Նամակաւորչմի լեզուն. — Զուարճալի դատաւաճան. — Թօթօ. — Քորնիշոնի երազը. — Մեղրալունի նամբարբութիւն. — Մայր ու աղայ. — ԱԿՆՑԻ ՍԱՐԱՅ ՄԸ. — Գիւղերու համար. — Դրամագլուխ եւ Աշխատութիւն. — Կեռասնին. — Քաւն բարայով աշխարհիս սակին. — ԹԻՂՍԹՆԵՐԸ. — Ծխախոտի մշակութիւնը. — Հարիւրաւոր Առածներ ու ԶՈՒՄԻՃԱԼԻՔՆԵՐ եւայլն, եւայլն:

Գինն է 5 Դանեկան. — Դաւառներ՝ թղթատրով 6 Դանեկան

Հանրագիտակի բոլոր Գործակալներու իով

Ուղղակի մենէ հինգ հատ գնողներուն վեցերորդ մը նուէր կը տրուի

